



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2023 թվականի N 71-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 955-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 3-րդ կետի 1-ին ենթակետը «Երկրորդական ճանապարհի հարում» բառերից հետո լրացնել «2.3.8-2.3.11՝ «Երկրորդական ճանապարհների հարում» բառերով.

2) 11-րդ կետը 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Թույլատրվում է տրանսպորտային լուսացույցի ներքևում տեղակայել լուսնասպիտակ (դեղնավուն) գույնի, մարդու և սլաքի ուրվագծով, թարթող տեղեկատու-

լուսային սեկցիաներ, որոնք վարորդներին նախազգուշացնում են անցումի վրա հետիոտների գտնվելու մասին:».

3) 88-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«88. Արգելվում է մուտք գործել խաչմերուկ, 1.26 գծանշմամբ նշված խաչմերուկի հատված, երթևեկելի մասերի կամ խաչմերուկի հատվածների հատում, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի:».

4) N 1 ձևի 1-ին գլխի 1.35-րդ կետում «Խաչմերուկի տարածք» բառերը փոխարինել «Խաչմերուկի հատված» բառերով.

5) N 1 ձևի 2-րդ գլուխը 2.3.2-2.3.7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.3.8-2.3.11-րդ կետով՝

«2.3.8-2.3.11. «Երկրորդական ճանապարհների հարում». 2.3.8՝ հարումներ աջից, 2.3.10՝ հարումներ ձախից, 2.3.9՝ հարում աջից, այնուհետև ձախից, 2.3.11՝ հարում ձախից, այնուհետև աջից».

6) N 1 ձևի 5-րդ գլուխը «5.19.1, 5.19.2. «Հետիոտնային անցում» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«5.19.3 և 5.19.4 - «Անկյունագծային հետիոտնային անցում» նշանները տեղակայվում են այն խաչմերուկներում, որտեղ հետիոտների երթևեկությունը կազմակերպված է խաչմերուկի անկյունագծով.».

7) N 1 ձևի 7-րդ գլխի 7.22-7.55 կետերը և 8-րդ նկարի 7.22-7.55 նշաններն ուժը կորցրած ճանաչել.

8) N 1 ձևի 8-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.29-րդ կետով.

«8.29. «Էլեկտրամոբիլների լիցքավորում» կիրառում են 7.4, 7.5, 7.7, 7.9-7.11 նշանների հետ էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորության մասին տեղեկացնելու համար».

9) N 1 ձևի 2-րդ նկարում 1.35 նշանը փոխարինել հետևյալ պատկերով՝

«



».

10) N 1 ձևի 3-րդ նկարը «Երկրորդական ճանապարհների հարում» վերնագրի վերջում լրացնել հետևյալ պատկերներով նոր՝ 2.3.8, 2.3.9, 2.3.10 և 2.3.11 նշաններով՝


«



».

11) N 1 ձևի 6.2-րդ նկարը լրացնել հետևյալ պատկերներով նոր՝ 5.19.3 և 5.19.4 նշաններով՝

«



».

12) N 1 ձևի 7-րդ նկարում «Շրջանցման ուղղություն» 6.18.1-6.18.3 նշանները փոխարինել հետևյալ պատկերներով՝

«



6.18.1



6.18.2




6.18.3

Շրջանցման ուղղություն

».

13) N 1 ձևի 9-րդ նկարը լրացնել հետևյալ պատկերով նոր՝ 8.29 նշանով՝

«



8.29

Էլեկտրամոբիլների լիցքավորում ».

14) N 2 ձևի 1-ին գլխում նշված բոլոր «1.2.1» թվերը փոխարինել «1.2» թվերով.

15) N 2 ձևի 1-ին գլխի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

16) N 2 ձևի 1-ին գլխի 1.17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1.17՝ դեղին բեկյալ հոծ գիծ, որը ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերը, իսկ 5.18՝ «Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ» նշանի առկայության դեպքում՝ տաքսիների կայանման վայրերը.».

17) N 2 ձևի 1-ին գլխի 33-րդ պարբերությունից հանել «1.2.2,» թիվը.

18) N 2 ձևի 10-րդ նկարը շարադրել 'սոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան